ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ներկայացված որոշման ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի, 34-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով <<Արագյուղ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Աննա Մարտիրոսյանի 2025 թվականի հոկտեմբերի 6-ի N 3 և <<Եղվարդի համար 2 մսուր- մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրեն Ռուզաննա Մելիքսեթյանի 2025 թվականի հոկտեմբերի 7-ի գրությունները համաձայն որի, համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում Նաիրի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի N 267-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 241-Ա որոշման N 2 և N6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածներիը նոր խմբագրությամբ շարադրելու մասին որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նաիրի համայնքի 2025 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին որոշման նախագծի ընդունումը համայնքի 2025 թվականի բյուջեում ենթադրում է 1036.875 հազար դրամի ծախսերի ավելացում:

Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Ս. Նիկողոսյան